

սրբագրելի տեղիներ, և տարօրինակ կլիներ, եթե դրանք իսպառ բացակայեին:

Հակառակ բնագրագիտական ծանոթագրությունների առատության ու մանրակրկիտության, Գ. Արզարյանը գրեթե չի շանայել այսօր գիտությանը հայանի հայկական և օտար ազդեցությունների համագրությունը ստուգել «Արևիկի Պատմության» հաղորդումները պատմվող իրադարձությունների վերաբերյալ, այդ պատճառով էլ չի ուրվագծվել պատմիչի աշխարհայացքը: Նույնը պիտի ասել այդ իրադարձությունների ժամանակագրության մասին: Պատմիչը երբեմն գոհանում է «չայնձմ ժամանակի», «չայնձամ» և եման այլ արտահայտություններով, որոնք հեշտությամբ կարող էին այլ տվյալների հիմամբ ստուգված ժամանակագրության վերածվել: Նույնիսկ Հռիփսիմեի և Զվարթնոց տաճարի շինության թվականն ու շինարարական արձանագրությունների գոյության փաստը ծանոթագրություններում չի արձանագրվում, և եթե Զվարթնոցի կապակցությամբ որոշ գրականություն հղվում է, ապա Հռիփսիմեի տաճարը թողած է անորոշության:

Առանձին սրբագրելիքների առկայությունը ցույց տալու համար բերելք մի քանի օրինակ-«թխուզակ» բառին հատուկ ծանոթագրություն է հատկացված (ծան. 1), բայց չգիտես ինչու ասելիքն այստեղ չի ավարտված և միայն հաջորդ ծանոթագրությունից ենք տեղեկանում, որ Գր. Խայրաբեկը ևս ճիշտ է թարգմանել այդ բառը: Ի դեպ, վերջին տարիներս այդ տերմինին անդրադառնալու առիթ ունեցան ուրիշները ևս, և Գ. Արզարյանն էլ արձագանքել է այլուր, ուրեմն կարելի էր հղել:

Պարսկերենից փոխառյալ «պէշոպա» տերմինը մեր մատենագրության մեջ մեկ անգամ է միայն գործածված՝ «Արևիկի Պատմության» մեջ և ճիշտ է ստո գարանվել Ք. Պատկանյանի կողմից: Գ. Արզարյանը հակված է այն «առա-

ջատար դորք» թարգմանել (էջ 298, ծան. 435), սակայն ընտանի ձևը «առաջապահ գորք»-ն է: Ի տարբերություն նախորդ հրատարակիչների, Գ. Արզարյանը «Արևիկից ծովը» դիտում է իրրև հատուկ անուն (էջ 306, ծան. 478), բայց չի փորձում մասնավորեցնել, թե VII դարի հեղինակը մեր ճանաչած ո՞ր ծովը նկատի ունի (Միջերկրակա՞նը): Չեռագրերի ու նախորդ հրատարակությունների «քաջ արանց արքայ Կոստանդին» արտահայտության «արանց»-ը այժմ սրբագրված է «յարանց», այսինքն՝ «տղամարդկանց մեջ քաջ, ընտիր տղամարդ» (էջ 339, ծան. 590): Մեկնարանությունը ճիշտ չէ, հայերենում «քաջ արանց արքայ» արտահայտությունը բանաձևային գործածություն ունի. Խոթրենացու մոտ, օրինակ, կարդում ենք՝ «քաջ արանց Խոսրով Հայոց արքա» (էջ 318), որ ամենեին սրբագրության ենթակա չէ: Համոզված չենք նաև, թե Բազը Նունարենում անպայման «Դձձձ»-ով կարտահայտվեր, քանի որ VII դարի աղբյուրներում այդ բառի դիմաց («Գիրք թղթոց») «լա» տերմինն է գործածվում, իսկ հայերեն քաջի համարժեքը կարող էր և շքաշքաշք լինել (այդպես է, օրինակ, մեզ արդեն ծանոթ Քեոսիլիէին վերաբերող ավետարանական տեքստում—շքաշքաշք Թեօփլե —[ո՞վ] քաջը Քեոսիլիէ):

Այս բոլոր դիտողությունները մանրուքներ են այն աշխատանքի դիմաց, որ գիտնականին վայել խնամքով, նվիրումով, անզագրություն ու հմտությամբ կատարել է բանասիրական գիտությունների գովառը Գևորգ Արզարյանը, միաժամանակ ունենալով իր կատարածին արժանի խմբագիր, որ է՝ հայագետ-արևելագետ Գագիկ Սարգսյանը:

Բանասիր. գիտ. քննաձու Պ. Մ. ՄՈՒՐԱԿՅԱՆ

«ԲԺՇԿԱՐԱՆ ՁԻՈՅ ԵՎ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՍՏՆՈՅ» (ԺԳ ԴԱՐ), աշխատասիրությունը Բ. Լ. Չուգասբյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, 273 էջ:

Միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրությունը միշտ էլ եղել է սովետահայ բանասիրության ուշադրության կենտրոնում: Վերջին տասնամյակներում յույս են տեսել մի շարք արժեքավոր աշխատություններ, որոնք պատմագիտության և բանասիրության մարզում մինչ այժմ եղած նվաճումների հիման վրա կատարված ուսումնասիրություններ են, ինչպես նաև գրավոր նոր աղբյուրների թննական-համեմատական

բնագրերի հրատարակման հետ կապված երախտարևը հետադոտություններ:

Այդ բնույթի հետադոտություններից է նաև XIII դարում զարգացման լայն հունի մեջ դրված գործնական գիտությունների ճյուղերից մեկի՝ անասնաբուծության (կոնկրետ անվանումով՝ ձիագիտության և ձիաբուծության), իրոք, «նյութով ու գրությամբ պատվական» եղակի ձեռագրի հրատարակությունը: Սույն

«Բժշկարանի» աշխատասիրողը արևելագետ Բ. Լ. Չուգասոյանն է: Նրա ուսումնասիրությանը են կազմվել «Խրատք նուշիրվանի» (Երևան, 1966), Հովհաննես Սեբաստացու «Պատմութիւն Սեբաստիոյ» (Երևան, 1974) քննական-համեմատական հրատարակությունները: Բ. Չուգասոյանը հանդես է եկել նաև ոչ միայն իր աշխատասիրությունների, այլև ուրիշների կողմից կազմված քննական-համեմատական բնագրերի բառագիտական-բառարանագրական հետադոստություններով: Այդ կարգի աշխատանքի արդյունք են Երիզուրիս Աղթամարցու (Երևան, 1963) և Մկրտիչ Նազաչի (Երևան, 1965) երկերի գիտական հրատարակություններին կցված բառարանները, որոնք արժեքավոր են միջին գրական հայերենի պատմության տեսակետից:

Գրախոսվող աշխատասիրության ներածության մեջ հեղինակն անդրադառնում է հին և միջնադարյան Հայաստանում ձևագիտության և ձևաբուծության մասին տեղեկություններ պարունակող աղբյուրներին. «...մ. թ. ա. առաջին հարյուրամյակում Հայաստանն արդեն հուշակված էր իր ազնվացեղ ձիերով և գրաստներով, ձևաբուծությունը երկրի տնտեսության հիմնական ճյուղերից էր» (էջ 7): Այնուհետև ներկայացվում են Հին Արևելքում անասնաբուծության և ձիաբուծության զարգացման մասին արժեքավոր տվյալներ պարունակող աղբյուրները, որոնց մեջ առանձին նշանակություն է տրվում մանավանդ արարական և պարսկական աղբյուրներին: Համառոտակի տրվում են մինչև այժմ դրանց անդրադարձած ուսումնասիրությունների արժարժած խնդիրներն ու հարցերը: Այս տեսակետից առանձին ուշադրություն է հատկացվում ձիագիտության և ձիաբուծության մասին տեղեկություններ պարունակող հայ մատենագրության նմուշներին: Ձիագիտության վերաբերյալ պահպանված 6 բնագրերում առկա են ձիերի տեսակների, նրանց սերման, բուծման, բուժման, խնամքի և այլ հարցերի մասին կարևոր տվյալներ: Այնուհետև խոսվում է ուշադրության առարկա ձեռնարկի մասին, որն ըստ աշխատասիրողի, թեև «կազմել է Ֆարաջ անունով մի ասորի բժիշկ՝ հայազգի Թորոս քահանայի օժանդակությամբ», սակայն ինչ-ինչ աղբյուրներ ունի արաբերեն և պարսկերեն ձիագիտական որոշ ձեռնարկների հետ: «Հայերեն սույն ձիամատյանի համեմատությունը մեզ մատչելի արաբերեն ու պարսկերեն ձիագիտական մի քանի ձեռնարկների հետ ցույց է տալիս նրանց կառուցվածքի ու բովանդակության որոշ ընդհանրություններ, բայց կան և բացահայտ տարբերություններ ու հեղինակային միջամտություններ, մի հանգամանք, որ խորհել է տալիս, թե բժիշկ Ֆարաջը, թերևս հետե-

վելով արարական ձիամատյաններին, որոնք «ասացեալ են» «ի բազում իմաստասիրաց՝ Ճընայ և Ապի Ուսուֆին և Հոայշիտայ և այլ բազում հնդկաց և Պաղտրտայ իմաստասիրացն» և դրանց երկերի նմանությամբ, բայց ոչ այդ ձեռնարկների բարդությամբ ու մանրամասնությամբ, կազմել է պարզ ու համառոտ շարադրված իր ձիամատյանը» (էջ 23—24):

Ներածության մեջ առանձին ուշադրություն է հատկացվում «Բժշկարանի» լեզվին՝ իբրև միջին հայերենի պատմության առաջին ենթաշրջանի մեջ առնվող հավաստի սկզբնաղբյուրի: Տրվում են նախնական գիտելիքներ միջին-հայերենյան բնորոշ բառաբարդումների, ձիաբուծությանը վերաբերող օտար բառերի և տերմինների՝ յամարժեքների, ինչպես նաև դեղաբույսերի, շափի ու կշոփ անվանումների մասին: Բառասլաշարի այդ յարցերը վերլուծվում են «Բժշկարանի» բառարանում: Ներածության վերջում աշխատասիրողն անդրադառնում է հրատարակվող բնագրերի ձեռագրերի նկարագրությանը, հիմնական բնագրի հրատարակության հանգամանքներին:

«Բժշկարանը» բաղկացած է 182 համառոտ և հստակ շարադրված գլուխներից, որտեղ 1) շարադրվում են ձիերի ընտրության, տեսակային և տարիքային առանձնահատկությունների, սերման և աճի, ցեղական ընտրանքին նպաստող արտաքին նշանների հարցերը, 2) տրվում են նրանց վարքի և պահվածքի, ֆիզիկական արատների և ֆիզիոլոգիական թերությունների, ներքին ցավերի, բնածին և ձեռքբերովի հիվանդությունների մասին հուշող արտաքին հայտանիշների բացահայտման, ինչպես նաև դրանց ապաքինման և վերացման, թունավոր արարածների խայթոցի դեմ առնելու միջոցներ, 3) հրահանգներ են առաջարկվում ձիերի՝ զանազան պատահական կերեր և նյութեր ուտելուց ստացած հիվանդությունների դեմ պայքար կազմակերպելու մասին, 4) նշվում են ներստամոքսային հիվանդությունների, ընգոսին որդերի դեմ բուժում ձեռնարկելու, ինչպես նաև արտաքին աշխարհից ստացած վնասվածքներից առաջացող ցավերի և հիվանդությունների կանխման եղանակներ և այլն: «Բժշկարանի» 19—22 գլուխներն, օրինակ, ամբողջովին հատկացված են ձիու արատներին: Յուրաքանչյուր արատի նշումով բացատրվում է, թե որ ձին է լավ, որը՝ վատ: Ահա այդ արատներից մեկի նկարագրությունը: «ԼԵ. Յաղագս աչից յայսպերոյ: Կապոյտ աչվին յայսպած է, զի խտիտի աչքն դէմ արեգականն ու դէմ սպիտակ իրաց, և եբ հայի՝ զնոյն: Եւ թէ մէկ աչքն լինի կապոյտ և կամ շիւ, և աչիցն

կուպքն եր սպիտակ լինի և կամ շուրջ, նա ատած է. և այն լինի ի խիստ ցրտուլն և կամ յարեգակնէն և կամ ի ձոյնէն: Եւ հակոյրն գնոյնն: Եւ որ լինի խորու աշվին և գորոփն մեծնայ. և այս իրվիս յայպած է: Եւ այն, որ լինի աշիցն սպիտակուցն շատ և պտուղն փոքր, առանց այնոր լինի կապոյտ և կամ շիլ, նա յայպած է» (էջ 92):

Ինչպես այս. այնպես էլ գրեթե մյուս բոլոր գլուխներում ներկայացվող նյութը «պատվական» է թե՛ բովանդակության խորության և հակիրճության, թե՛ լեզվական ատաղձի ինքնատիպության տեսակետից, և բոլոր դեպքերում ակնառու է միջնադարյան բժշկագիտության մակարդակը:

Բ. Չուգասոյանը աշխատասիրության մեջ ղեկավարում է «Ի գրաստուն բժշկարանէն փոխած» վերնագրով մի հավելված, որը մինչ այս տպագրված ենք գտնում «Բազմավեպ» հանդեսի էջերում (1867, էջ 354—357): Այդ ձեռագիրը պատվում է Վենետիկի Միլիթարյանների Մատենադարանում և, ըստ աշխատասիրողի կարծիքի, «սրա առաջին իսկ համեմատությունը բժիշկ Ֆարաջի «Բժշկարանի» հետ ցույց է տալիս, որ այն վերջինիս մի քանի հատվածների խիստ համառոտությունն է. այստեղ պահպանված են թե՛ կիլիկյան միջին հայերենին բնորոշ հատկանիշները և թե՛ արաբական փոխառությունները» (էջ 16—17):

Գրքի յավագույն բաժիններից մեկն էլ ընդարձակ բառարանն է, որը պարունակում է բնագրում կիրառված՝ մեր հաշվումներով 925 բառ: Դրանք, ըստ աշխատասիրողի բնութագրման, առաջին անգամ գործածվող, բառարարման տեսակետից նոր նմուշներ հանդիսացող, իբրև փոխառություններ՝ առաջին անգամ այս բնագրում հանդիպող, ինչպես նաև միջինհայերենյան գրավոր մյուս աղբյուրներում ուղղագրական-գրչագրական տարբերություններ և սակավ վկայություններով զուգահեռներ տվող լեզվական միավորներ են: Ուշագրավն այն է, որ այդ բառերից 254-ը, համաձայն հեղինակի հատուկ ծանուցման, մինչև այժմ «մեր բառարաններում չեն գրանցված», իսկ 114-ը «նորովի ստուգարանվող կամ լրացուցիչ նոր բացատրություններով տրվող» բառեր են համարվում: Մնացա-

ծը գրավոր աղբյուրներում կամ արդեն գործածված, կամ բարբառային տարբերակներ հանդիսացող բառեր են:

Գրախոսվող աշխատասիրությանը կից բառարանի տվյալները ուշագրավ են նաև որակական կողմով: Ծագումնային առանձնահատկությունների տեսակետից, օրինակ՝ նկատելի է, որ սույն «Բժշկարանում» կիրառված բառերը՝ ա) փոխառություններ են արաբերենից, պարսկերենից, մեկ-երկու բառ՝ ֆրանսերենից և նույնքան էլ՝ թուրքերենից, որոնց ընդհանուր քանակը 200-ից շի անցնում, բ) ներկայացնում են հայերենի համապատասխան բառային միավորների բարբառային կամ միջբարբառային տարբերակները՝ բխելով այս կամ այն բարբառից և կիրառվելով դրական տարբերակի փոխարեն կամ նրան զուգահեռ: Բառապաշարի այդ ամբողջությունը կազմում է սույն բառարանի ընդհանուր բառային միավորների գերակշիռ մասը:

Հեղինակը մեծ ուշադրություն է հատկացնում բառապաշարի իմաստային առանձնահատկություններին, քննարկում այն բառերը, որոնք իրենց կոնկրետ իմաստներով համեմատության մեջ կարող են դրվել մինչև այդ եղած կիրառությունների ներկայացրած իմաստների հետ: Իսկ ընդհանուր առմամբ բառային միավորները բացատրվում են այն նշանակության մատնանշումով, որով հանդես են եկել:

«Բժշկարանի» բառարանային նյութը, գործառական առանձնահատկության տեսակետից, ներկայացնում է միջնադարյան անասնաբուժության մեջ հանդես եկող գիտական հասկացությունների անվանումները, որոնք փոխառության և հայերենի ներքին հնարավորությունների գործադրման արդյունք են:

Այսպիսով, «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ (XIII դար)» բնագրի քննական-համեմատական հրատարակությունը արժեքավոր է ոչ միայն ինքնին, այլև այն բանով, որ հավաստի ու սկզբնագիր տեղեկություններ է պարունակում միջնադարյան հայ բժշկագիտության, ինչպես նաև միջին հայերենի զարգացման պատմության հարցերի լուսարանման համար:

Բանասիր. գիտ. քեկնածու
Վ. Գ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ